

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՈԱԶՄԻԿԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՀՀ ԽՄԻԶՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ)

Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լիանա Հայկազի Գրիգորյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Աշմատի Հակոբյան

տնտեսագիտության թեկնածու
Րաֆֆի Արայի Ալեքսանյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Պետական Համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հոկտեմբերի 21-ին, ժամը 14⁰⁰-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. սեպտեմբերի 11-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



S.U.Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկության գործունեության կայունությունը, որը զգալիորեն կախված է նրա ֆինանսական վիճակից, հանդիսանում է շուկայական մրցակցությանը դիմակայելու և գործունեության անընդհատությունն ապահովելու կարևորագույն գործոն: Այս առումով ֆինանսական վերլուծությունը հանդիսանում է ֆինանսական կառավարման կարևորագույն բաղադրիչներից մեկը:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ գոյություն ունեն ընկերության ֆինանսական վիճակի վերլուծության մեծ թվով մեթոդաբանություններ, որոնցում սակայն հաշվի չեն առնված առանձին երկրի տնտեսության զարգացման մակարդակը, առանձին ոլորտների և առանձին ձեռնարկությունների գործունեության առանձնահատկությունները:

Հաշվի առնելով «ֆինանսական վիճակ» կատեգորիայի մեկնաբանությունների բազմազանությունը, տնտեսական վերլուծության արդյունքների օգտագործողների լայն շրջանակի առկայությունն ու առանձին դեպքերում նրանց տեղեկատվական նպատակների տարբերությունները, ինչպես նաեւ առանձին տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտի և միջավայրի առանձնահատկությունները, մեր կարծիքով անհրաժեշտություն է առաջանում կատարելագործել կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության մեխանիզմների տեսական եւ մեթոդաբանական մոտեցումները՝ այն կոնկրետ ՀՀ տնտեսության, առանձին ոլորտների և կոնկրետ կազմակերպությունների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ֆինանսական վիճակի վերլուծության միջազգային և հայրենական փորձի բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա ՀՀ ոգելից խմիչքների ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի վերլուծության և ախտորոշման տեսական եւ մեթոդաբանական հարցերի կատարելագործման ուղիների մշակումն ու դրանց ներդրման ուղղությամբ գործնական առաջարկների կատարումը:

Այս նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծում.

– նորմատիվ իրավական ակտերում, հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատություններում ֆինանսական վիճակի վերլուծության վերաբերյալ առկա մոտեցումների, տեսակետների, հայացքների և «ֆինանսական վիճակի վերլուծություն» կատեգորիայի ըմբռնման սկզբունքների բազմակողմանի ուսումնասիրություն և քննադատական գնահատական,

– ֆինանսական վիճակի փոփոխության պատճառների, այդ փոփոխության վրա ազդող գործոնների բազմակողմանի ուսումնասիրություն և այդ պատճառների համակարգված ներկայացում ու մեկնաբանություն,

– ֆինանսական վիճակի վերլուծության հայեցակարգային ապարատի ուսումնասիրություն և հստակեցում, ֆինանսական վիճակի վերլուծության գործող մեթոդաբանությունների առավելությունների ու թերությունների բացահայտում և ֆինանսական վերլուծության իրականացման կառուցվածքային-տրամաբանական ալգորիթմի մշակում, որը հիմնվելով ֆինանսական վերլուծության միջազգային պրակտիկայում գործող ավանդական ալգորիթմի հիմնական սկզբունքների վրա, միաժամանակ հաշվի կառնի ժամանակակից հայաստանյան տնտեսության առանձնահատկությունները,

– ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բնութագրող ընդհանրացնող և մասնակի ցուցանիշների համակարգի մշակում և հիմնավորում,

– միջազգային արակտիկայում ընդունված նորմատիվների համակարգի վերլուծության և տնտեսվարման արդի պայմաններում ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունների համար ֆինանսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների արժեքների ընդունելի մակարդակի հաշվարկման մեթոդաբանության մշակում,

– ընթացիկ իրացվելիության գործակցի, շրջանառելիության ցուցանիշների և հաշվեկշռի իրացվելիության մակարդակի գնահատման մեթոդաբանության կատարելագործում,

– ցուցանիշների ձևավորած համակարգի և դրանց արժեքների ընդունելի մակարդակների հաշվարկների հիման վրա ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բնութագրող համապարփակ ինտեգրալ ցուցանիշի կառուցում, որը կազմակերպությունների ֆինանսական վիճակը կգնահատի տարբեր կողմերից և կտա գործոնային վերլուծություն իրականացնելու հնարավորություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունն ու ֆինանսական վիճակն է: Հետազոտության առարկան ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության և կանխատեսման արդյունավետ համակարգի ձևավորման հետ կապված տեսական, մեթոդաբանական և գործնական խնդիրների ամբողջությունն է:

Հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել ֆինանսական վիճակի վերլուծության և կանխատեսման խնդիրների վերաբերյալ հայ և օտարերկրյա հեղինակների գիտական հետազոտություններն ու մեթոդաբանական բնույթի աշխատանքները, տնտեսավարող սուբյեկտների գործունեության կարգավորման վերաբերյալ օրենսդրական ու նորմատիվ իրավական ակտերը, ՀՀՄՄ-երը:

Առաջադրված խնդիրների լուծման մեթոդաբանական հիմքն են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր մեթոդներ, ինչպիսիք են վերլուծությունը, համադրումը, ինդուկցիան, դեդուկցիան, մոդելավորումը, չափումը, ընդհանրացումը, պատմական և տրամաբանական վերլուծությունը:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութերը, ուսումնասիրված կազմակերպությունների ֆինանսական և կառավարչական հաշվետվությունները, հետազոտության թեմային վերաբերող գիտական հրապարակումները, միջազգային գիտաժողովների հրատարակած նյութերը, էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսները, ինչպես նաև հեղինակի հետազոտության արդյունքները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Հետազոտության նորույթն է հանդիսացել ՀՀ ոգելից խմիչքների կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության մեթոդաբանության բարելավումը: Մասնավորապես.

➤ առաջարկվել է ֆինանսական վիճակի վերլուծության նոր կառուցվածքային սխեմա, որում հաշվի են առնված ազգային տնտեսության զարգացման մակարդակը, առանձնահատկությունները, հայկական ընկերություններում ֆինանսական

վերլուծության ավանդական ալգորիթմի կիրառման առումով առկա խնդիրները, և որը հիմնված է կազմակերպությունների ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների նվազագույն բավարար ու նախընտրելի արժեքների գնահատումների վրա,

➤ առաջարկվել է կազմակերպությունների վճարունակության գնահատման այլընտրանքային մեթոդաբանություն, հիմքում դնելով ընթացիկ ակտիվները դրամական միջոցների վերածվելու ժամանակաշրջանի և ընթացիկ պարտավորությունների մարման ժամանակահատվածի համադրելիությունը,

➤ մշակվել են մատրիցային հաշվեկշռի տարբերակի կառուցման մեթոդական մոտեցումներ, որը հնարավորություն է տալիս գնահատելու կազմակերպության ֆինանսավորման համապատասխան աղբյուրներով ակտիվների ապահովվածության մակարդակը քառաստիճան մոտեցմամբ,

➤ մշակվել են ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի և դրա առանձին ուղղությունների համապարփակ ցուցանիշներ, որոնք կազմակերպությունների ֆինանսական վիճակը գնահատում են բազմագործոն մոտեցումներով և տալիս են գործոնային վերլուծության իրականացնելու հնարավորություն:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունում հիմնավորված տեսական դրույթները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի գնահատմանն ուղղված խնդիրների հետագա գիտական և գործնական հետազոտությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ առաջարկված մոտեցումները, մեթոդները, վերլուծական եզրակացությունները, առաջարկություններն ու արդյունքները կարող են գործնական լայն կիրառություն գտնել ինչպես ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի, այնպես էլ արտադրական այլ ձեռնարկությունների կողմից իրենց և գործընկեր կազմակերպությունների ֆինանսական վիճակի բազմակողմանի գնահատման և ախտորոշման, ինչպես նաև այդ վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման համար: Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել նաև աուդիտորական և խորհրդատվական ընկերությունների կողմից՝ պատվիրատու կազմակերպությունների ֆինանսական վերլուծության ժամանակ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության դրույթները քննարկվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ՀՊՏՀ «Կառավարչական հաշվառման ու աուդիտ» ամբիոնի նիստում: Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ աշխատանքային քննարկումներ են իրականացվել որակավորված աուդիտորների, խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների մասնագետների, հաշվապահ-վերլուծաբանների հետ և արժանացել են վերջիններիս դրական գնահատականներին:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են թվով 8 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից: Աշխատանքի ծավալը 161 էջ է, հավելվածները՝ 157 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության գիտական նորույթները, գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության տեսական-մեթոդաբանական հիմքերը» գլխում մանրակրկիտ ուսումնասիրվել է «Ձեռնարկության ֆինանսական վիճակ» հասկացության բովանդակությունը և, ընդհանրացնելով հետազոտողների տարբեր տեսակետները, ձևակերպվել է արտադրական ձեռնարկության ֆինանսական վիճակի հեղինակային սահմանումը. «Ֆինանսական վիճակը՝ ձեռնարկության արտադրական ներուժը, սեփական և փոխառու ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխումն ու օգտագործումը, ինչպես նաև ժամանակի ցանկացած պահին դրանց բավարարությունը բնութագրող տնտեսագիտական կատեգորիա է, որն արտացոլում է ձեռնարկության վճարունակությամբ և գնահատվում է շրջապտույտի պրոցեսում կապիտալի վիճակը և արժեթղթերի շուկայում ձեռնարկության կայուն դիրքը բնութագրող ցուցանիշների համակարգի միջոցով»:

«Ֆինանսական վիճակ» կատեգորիայի տարբեր մեկնաբանությունները հանգեցնում է նաև դրա առանձին ուղղությունների վերաբերյալ հայացքների միասականության բացակայությանը: Մասնավորապես, ֆինանսական կայունության տնտեսագիտական էությունը տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվում:

Մի շարք հեղինակներ (Մ. Ն. Կրեյնինան,¹ Վ.Է.Չերնովան², այլոք) համարում են, որ «ֆինանսական կայունությունը» համընկնում է «ֆինանսական անկախություն» հասկացության հետ ու բնութագրվում է մի շարք ցուցանիշներով:

Հեղինակավոր ռուս հեղինակների մեկ այլ խումբ (Ա.Վ.Գրաշով,³ Օ.Վ.Եֆիմովա⁴, և այլոք) առաջ են տանում այն կարծիքը, որ ձեռնարկության ֆինանսական կայունությունը բնութագրվում է երկու կատեգորիաներով՝ ֆինանսական անկախություն և վճարունակություն: Հաշվի առնելով հեղինակների կարծիքները, մեր կողմից ձևակերպվել է ֆինանսական կայունության հեղինակային սահմանում. «Ֆինանսական կայունությունը՝ դա կազմակերպության ֆինանսական կայուն վիճակն է, շուկայի արտաքին մասնակիցներից նրա ֆինանսական անկախությունը, որը հնարավոր է ապահովել ֆինանսավորման աղբյուրների կազմում սեփական կապիտալի բավարար բաժնով, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների, դրանց բաշխման և օգտագործման այնպիսի վիճակն է, որն ապահովում է ձեռնարկության զարգացում և ֆինանսական կառավարման նպատակներին համապատասխան՝ նրա շուկայական արժեքի աճ»:

Ատենախոսության 1-ին գլխի երկրորդ պարագրաֆում իրականացվել է ձեռնարկության ֆինանսական վիճակի վերլուծության գործող մեթոդաբանությունների մանրակրկիտ վերլուծություն, դրանց առավելությունների ու թերությունների բացահայտում և ֆինանսական վերլուծության իրականացման կառուցվածքային-տրամաբանական այգորիթմի մշակում, որը հիմնվելով ֆինանսական վերլուծության միջազգային պրակտիկայում գործող ավանդական

¹ Крейнина М.Н. Финансовый менеджмент: учеб. пособие. М.: Дело и сервис, 1998. с.82

² Чернова В. Э. Шмелевич Т. В. Анализ финансового состояния предприятия: Учебное пособие. - 2-е изд. - СПб.: СПбГУРП, 2011. с.29

³ Грачев А.В. Анализ и управление финансової устойчивостью предприятия: от бух. учета к экономическому. М.: Финпресс, 2002. с. 64

⁴ Анализ финансовой отчетности: учеб. пособие для студентов, обучающихся по специальностям «Финансы и кредит», «Бухучет, анализ и аудит» / (Е.И.Бородина и др), под ред. О. В. Ефимовой, М. В. Мельник. - 4-е изд., испр. и доп. - М.: Изд-во ОМЕГА-Л, 2009. - с. 294

ալգորիթմի հիմնական սկզբունքների վրա, միաժամանակ հաշվի է առնում ժամանակակից հայաստանյան տնտեսության առանձնահատկությունները:

Մասնագիտական գրականության և դրանցում առաջադրված մեթոդաբանությունների հետազոտության արդյունքում մեր կողմից կատարվել են մի շարք եզրահանգումներ, որոնց հիման վրա ֆինանսական վերլուծության ամփոփիչ ընթացակարգերի հետագա մշակման և կատարելագործման ուղղությամբ առաջարկվել են ընթացակարգեր, որոնք, մեր կարծիքով կնպաստեն ֆինանսական վերլուծության ավանդական ալգորիթմը հայկական իրականությանը և մասնավորապես խմիչքների արտադրության ոլորտին հարմարեցմանը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

«Ը խմիչքների արտադրության ոլորտում գործող կազմակերպությունների ֆինանսական վերլուծության իրականացման ավանդական և առաջարկվող ալգորիթմները

Ավանդական	Առաջարկվող
1. Անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում (ծավալը կախված է ֆինանսական վիճակի վերլուծության խնդիրներից ու տեսակից):	
2. Տեղեկատվության հավաստիության գնահատում (որպես կանոն անկախ աուդիտի արդյունքների օգտագործմամբ):	
3. Տեղեկության վերլուծական մշակում (վերլուծական աղյուսակների և հաշվետվության ընդհանրացված (ամփոփ) ձևերի կազմում):	
4. Ֆինանսական հաշվետվությունների կաուցվածքի գնահատում (ուղղահայաց վերլուծություն):	
5. Ֆինանսական հաշվետվությունների հողվածներում տեղի ունեցած փոփոխությունների գնահատում (հորիզոնական տրենդային վերլուծություն):	
6. Ֆինանսական գործակիցների հաշվարկ ըստ ֆինանսական գործունեության հիմնական ուղղությունների (ֆինանսական կայունություն, վճարունակություն, գործարար ակտիվություն, շահութաբերություն և այլն):	6. Վերլուծության համար անհրաժեշտ ֆինանսական գործակիցների նեղ (սահմանափակ թիվ) շրջանակի առանձնացում, որոնց կազմը տարբեր կազմակերպությունների համար կարող է տարբեր լինել:
7. Ֆինանսական գործակիցների արժեքների համեմատում նորմատիվային արժեքների հետ (միջազգային պրակտիկայում սահմանված և միջին ձյուլային նորմատիվներ):	7. Գունկրետ կազմակերպության համար ընտրված ֆինանսական գործակիցների նորմատիվների կամ նվազագույն (առավելագույն) թույլատրելի արժեքների հաշվարկ և փաստացի ցուցանիշների համեմատում ստացված արդյունքների հետ:
8. Ֆինանսական գործակիցների փոփոխության գնահատում (գործակիցների արժեքների բարելավման կամ վատթարացման միտումների բացահայտում):	8. Գործակիցների արժեքների բարելավման կամ վատթարացման միտումների բացահայտում և պահուստների բացահայտման նպատակով այդ փոփոխությունների գործոնային վերլուծություն:
9. Ինտեգրալ ֆինանսական ցուցանիշների հաշվարկ և գնահատում (կազմակերպության ֆինանսական դրությունը գնահատող բազմագործոն մոդելներ, որոնցից առավել հայտնին Ալտմանի Z հաշիվն է):	9. Տվյալ կունկրետ կազմակերպության կամ ոլորտի համար ֆինանսական վիճակի առանձին ուղղությունների գնահատման մեթոդաբանության կատարելագործում և ֆինանսական վիճակի ամփոփիչ ինտեգրալ ցուցանիշի կառուցում ու հաշվարկ, որը պետք է հիմնվի նախորդ ընթացակարգերում կապցված որոշումների և իրականացված հաշվարկների արդյունքների վրա:
10. Մշակված տվյալների մեկնաբանությունների հիման վրա կազմակերպության ֆինանսական վիճակի վերաբերյալ եզրակացության նախապատրաստում:	10. Կազմակերպության ֆինանսական գործունեության և ֆինանսական վիճակի վերաբերյալ եզրակացության տիպային ձևաչափի մշակում, որում ոչ միայն արձանագրվում են վերլուծվող կազմակերպությունում առկա խնդիրները, այլ նաև ցույց են տրվում այն գործոնները, որոնք տվյալ պահին ազդում և հետագայում կարող են ազդել ֆինանսական վիճակի փոփոխության վրա, և առաջարկվում են այն միջոցառումները, որոնք կբերեն կազմակերպության ֆինանսական առողջացման ու ֆինանսական վիճակի բարելավմանը:

Ատենախոսության 1-ին գլխի 3-րդ պարագրաֆում ամփոփ ձևով ներկայացվել են արտադրական կազմակերպությունների ֆինանսական դրության վատթարացման պատճառների համակարգման հիմնական մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական վիճակը բնույթաբար ցուցանիշների համակարգի և դրանց նվազագույն բավարար արժեքների սահմանման մեթոդաբանության մշակումը» գլխում, ֆինանսական վերլուծության միջազգային պրակտիկայում կիրառվող բազմաթիվ ցուցանիշների վերլուծության և համադրման

հիման վրա ձևավորվել է ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բնութագրող առավել էական, սահմանափակ թվով ցուցանիշների համակարգ, որը կարող է օգտագործվել որպես այդ վիճակի համապարփակ գնահատման և նպատակային կանխատեսման հիմք: Այս համատեքստում հիմնավորվել է << տնտեսության, և մասնավորապես << ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների համար առավել էական ֆինանսական ցուցանիշների՝ միջազգային պրակտիկայում ընդունված նորմատիվային արժեքների անհամապատասխանությունը և մշակվել է այդ ցուցանիշների նվազագույն բավարար և նախընտրելի արժեքների որոշման մեթոդաբանություն, որում հաշվի է առնված ոլորտի առանձնահատկությունները:

Մասնավորապես, 2.1 պարագրաֆում անդրադարձ է կատարվել սեփական ընթացիկ ակտիվների հաշվարկի հետ կապված գիտական տարածայնություններին, որոնք պայմանավորված են դրա էության տարբեր մեկնաբանություններով և, շատ հաճախ, սեփական ընթացիկ ակտիվներ ցուցանիշի հետ դրա նույնացման հանգամանքով:

Մեր կողմից հիմնավորվել է, որ նշված ցուցանիշները բացարձակապես տնտեսագիտական տարբեր իմաստ ունեն: Հետևաբար այդ ցուցանիշների և՛ մեկնաբանությունները, և՛ հաշվարկի ալգորիթմները պետք է տարբեր լինեն:

Նվազագույն անհրաժեշտ զուտ ընթացիկ ակտիվների գումարի որոշումը պայմանավորված է հետևյալ կանոնով. ֆինանսապես կայուն և վճարունակ կազմակերպությունում սեփական կապիտալի և երկարաժամկետ ներգրավված միջոցների հաշվին պետք է ֆինանսավորվեն ոչ իրացվելի ակտիվները:

Նվազագույն անհրաժեշտ (բավարար) զուտ ընթացիկ ակտիվները = առավել ոչ իրացվելի ընթացիկ ակտիվներին:

Չուտ ընթացիկ ակտիվների փաստացի մեծության և դրա նվազագույն անհրաժեշտ (բավարար) մեծության տարբերությունը կարելի է ներկայացնել որպես կայուն պասիվներով դանդաղ իրացվելի ընթացիկ ակտիվների ապահովվածության պաշար: Այս ցուցանիշը կազմակերպությանը հնարավորություն կտա առաջիկայում պահպանել կայուն ֆինանսական վիճակ, իրականացնել մասշտաբային ներդրումային քաղաքականություն, կամ դիմակայել ֆինանսական ղժվարություններին՝ իրացման ծավալների անկման պայմաններում:

Չուտ ընթացիկ ակտիվների փաստացի և բավարար մեծությունների շեղումների, համեմատական նկարագիրը ներկայացված է աղյուսակ 2 ում:⁵

Աղյուսակ 2
Վերլուծվող ձեռնարկությունների կայուն պասիվներով ապահովվածության պաշարի /մլն դր./

Կազմակերպություն	ը1.01.10	ը1.01.11	ը1.01.12	ը1.01.13	ը1.01.14	ը1.01.15	ը1.01.16	ը1.01.17	ը1.01.18	ը1.01.19	ը1.01.20
«ՍԱԴ» ՓԲԸ	-4199,2	4677,2	645,7	1466,2	2917,3	2417,2	2692,5	3246,6	3065,0	3069,1	2964,6
«Վեդի Այր» ՓԲԸ			-1019,1	-1056,8	-569,3	-90,6	-140,7	295,8	875,9	799,3	556,8
«Երևանի Արարատ Կոնյակի - Գինու-Օղու Կոմբինատ» ԲԲԸ				7835,0	6573,1	10098,3	11724,9	7942,1	6207,1	6371,7	254,6
Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ		-154,9	47,0	150,9	-248,2	-23,3	-16,3	195,2	338,2	-5,7	-398,6

Վերլուծության արդյունքներից ակնհայտ է դառնում, որ վերլուծվող կազմակերպությունները կայուն պասիվներով ապահովվածության պաշար վերլուծվող բոլոր տարիներին առկա է միայն «Երևանի Արարատ Կոնյակի-Գինու-Օղու Կոմբինատ» ԲԲԸ-ում: Հատկանշական է, որ 2017-2018թթ. կայուն պասիվներով ապահովվածության պաշար առկա է վերլուծվող բոլոր կազմակերպություններում, և

⁵ Թվարկված ցուցանիշների մշակված մոտեցմամբ հաշվարկների արդյունքները ներկայացված են հավելված 6-ում:

այդ ցուցանիշը դրսևորում է աճի միտում, ինչը վկայում է ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ակտիվացման և գործող կազմակերպությունների վճարունակության բարելավման մասին: Իսկ ահա 2019-2020թթ. այս ցուցանիշի գծով անկում է նկատվել, իսկ Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ում այն կազմել է բացասական մեծություն:

Աղյուսակ 3-ում ամփոփված են վերլուծվող 4 ընկերությունների 2019թ. զուտ ընթացիկ ակտիվների փոփոխությունների գործոնային վերլուծության արդյունքները:

Աղյուսակ 3

Չուտ ընթացիկ ակտիվների գործոնային վերլուծության արդյունքները 2019թ

Ցուցանիշի անվանումը	«ՍԸՊ» ՓԲԸ /հզ.դր/	«Վեդի Ալկո» ՓԲԸ /հզ.դր/	«Երևանի Երարատ Կոնյակի-Գինու- Օղու Կոմբինատ» ԲԲԸ /հզ.դր/	Երևանի «Շամ- պայն գինիների գործարան» ԲԲԸ /հզ.դր/
	Չուտ ընթացիկ ակտիվների փաստացի մեծության փոփոխությունը/աճ,(նվազում)/ այդ թվում ի հաշիվ	700803	1110535	(11616641)
Սեփական կապիտալի աճի (նվազման)	76972	496322	1423269	11511
Ոչ ընթացիկ պարտավորությունների աճի (նվազման)	(984433)	702098	(13002851)	(274061)
Ոչ ընթացիկ ակտիվների նվազման (աճի)	206658	(87885)	(37059)	9619

Հաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ 2019թ-ին, բացի «Վեդի Ալկո» ՓԲԸ-ի, մյուս կազմակերպություններում զուտ ընթացիկ ակտիվների փաստացի արժեքը նվազել է: Ընդ որում այդ նվազումը պայմանավորված է հիմնականում ոչ ընթացիկ պարտավորությունների նվազման հանգամանքով:

Հաշվի առնելով զուտ ընթացիկ ակտիվների կապը կազմակերպության գործունեության հիմնական ցուցանիշների հետ, կարելի է որոշել ակտիվների թունարի թույլատրելի (առավելագույն) աճը (այդ թվում ոչ ընթացիկ ակտիվներում թույլատրելի ներդրումները), որը չի հանգեցնի զուտ ընթացիկ ակտիվների մեծության նվազմանը՝ դրա նվազագույն անհրաժեշտ մակարդակից ներքև: Այս տեսանկյունից սեփական միջոցներով ապահովվածության պաշարը կարելի է դիտարկել որպես զուտ ընթացիկ ակտիվների նվազագույն բավարար մեծության պահպանման նպատակով առավել ոչ իրացվելի ակտիվներում ներդրումների թույլատրելի մակարդակ: Այն կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևի միջոցով.

Թույլատրելի աճը (ոչ ընթացիկ ակտիվների և դանդաղ իրացվելի ընթացիկ ակտիվների) ≤ (սեփական կապիտալի աճ + ոչ ընթացիկ պարտավորությունների աճ) + + (նախորդ տարվա զուտ ընթացիկ ակտիվների փաստացի գումար - նախորդ տարվա զուտ ընթացիկ ակտիվների նվազագույն անհրաժեշտ (բավարար) մեծություն);

Չուտ ընթացիկ ակտիվներով ապահովվածության պաշար (դեֆիցիտ) = =Առավելագույն թույլատրելի ներդրումները դժվար իրացվելի ակտիվներում, որի դեպքում կապահավելի զուտ ընթացիկ ակտիվների նվազագույն անհրաժեշտ (բավարար) մեծությունը - Դժվար իրացվելի ակտիվներում փաստացի ներդրումները:

Հետազոտության 2.2 պարագրաֆը նվիրված է կազմակերպության վճարունակության և ընթացիկ իրացվելիության նվազագույն (բավարար) մակարդակի գնահատման մոտեցումներին: Թեև տնտեսական զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում, տարբեր ձեռնարկություններում իրացվելիության գործակիցների օպտիմալ արժեքները տարբեր են, այդուհանդերձ շատ հաճախ որպես նորմատիվային առաջարկվում է 2-ից մեծ արժեքը:

Ըստ Վ.Վ.Կովալյովի, արևմտյան հաշվեվերլուծական պրակտիկայում ընթացիկ իրացվելիության գործակցի ներքին թույլատրելի սահմանը ընդամենը կողմնորոշող մեծություն է: ⁶

⁶ Ковалев В.В., Ковалев Вит.В. Корпоративные финансы и учет: понятия, алгоритмы, показатели: Учеб. Пособие - М.: Проспект, КНОРУС, 2010. стр. 268

ՀՀ-ում դեռևս չկա տարբեր ճյուղերի ձեռնարկությունների իրացվելիության գործակիցների օպտիմալ արժեքների թարմացվող վիճակագրական տվյալների բազա: Այդ պատճառով, մեր կարծիքով, հայկական կազմակերպություններում իրացվելիության գնահատման ժամանակ անհրաժեշտ է՝

1. ուշադրություն դարձնել գործակիցների փոփոխությունների դինամիկային,

2. հաշվարկել տվյալ կոնկրետ կազմակերպության համար իրացվելիության գործակիցների նվազագույն բավարար արժեքները:

Աշխատանքում առաջարկվել է կոնկրետ կազմակերպության համար ընթացիկ իրացվելիության բավարար մակարդակի հաշվարկի երկու տարբերակ, որոնք պայմանականորեն կանվանենք «մեղմ» և «խիստ» մոտեցումներ: Մոտեցումների տարբերությունը պայմանավորված է գնորդների և մատակարարների հետ հաշվարկների պայմանների նկարագրության տարբերություններով: «Մեղմ» և «խիստ» տարբերակների կիրառմամբ կարելի է որոշել ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար արժեքի նվազագույն և առավելագույն սահմանները:

«Մեղմ» տարբերակը ենթադրում է գնորդների կողմից հաշիվների պարբերական վճարումներ և կազմակերպության կողմից մատակարարների հաշիվների պարբերական վճարումներ: Այս տարբերակում մատակարարների հաշիվների անխափան վճարման համար անհրաժեշտ սեփական միջոցների գումարը որոշվում է բացառիկ մեծությունների և մուտքերի (դերիտորական պարտքեր ու ստացված ընթացիկ կանխավճարներ) ու ելքերի (կրեդիտորական պարտքեր ու ստացված ընթացիկ կանխավճարներ) շրջապտույտների տևողությունների հիման վրա:

Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակի հաշվարկի ալգորիթմը «մեղմ» տարբերակի դեպքում կունենա հետևյալ տեսքը.

1. Դեբիտորների և կրեդիտորների հետ հաշվարկների պայմանների գնահատում:

2. Առավել ոչ իրացվելի ընթացիկ ակտիվների գումարի որոշում:

3. Գնորդների կողմից դրամական միջոցների վճարումների մեծության(ՎՃ_Գ) որոշում:

4. Մատակարարներին անխափան վճարումների (ՎՃ_Մ) ապահովման համար անհրաժեշտ սեփական միջոցների գումարի որոշում.

ՎՃ_Մ=(Կրեդիտորական պարտքերի միջին մեծություն+ մատակարարներին տրամադրված կանխավճարների միջին մեծություն) - գնորդների կողմից դրամական միջոցների վճարումների մեծությունը (ՎՃ_Գ):

Հետագա հաշվարկների համար հիմք են ընդունվում վերը բերված բանաձևի արժեքից և զրոյից առավելագույնը:

5. Զուտ ընթացիկ ակտիվների նվազագույն բավարար արժեքի (ԶԸԱ_{ԲԱՎ}) որոշում.

ԶԸԱ_{ԲԱՎ}=Առավել ոչ իրացվելի ակտիվներ + մատակարարներին անխափան վճարումների ապահովման համար անհրաժեշտ սեփական միջոցներ=ԸԱ_{ԳՆԻՐ}+ ՎՃ_Մ:

6.Ընթացիկ պարտավորությունների թույլատրելի մեծության (ԸՊ_{ԹՈՒՅԼ})որոշում.

ԸՊ_{ԹՈՒՅԼ}=Ընթացիկ ակտիվներ փաստացի միջին մեծություն (ԸԱ_Փ) -Զուտ ընթացիկ ակտիվների նվազագույն բավարար արժեք (ԶԸԱ_{ԲԱՎ}):

7.Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակի(ԳԸԻ_{ԲԱՎ}) որոշում.

$$\text{ԳԸԻ}_{\text{ԲԱՎ}} = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ փաստացի}}{\text{Ընթացիկ պարտավորություններ թույլատրելի}} = \frac{\text{ԸԱՓ}}{\text{ԸՊԹՈՒՅԼ}}:$$

Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակի հաշվարկի «խիստ» տարբերակը ենթադրում է գնորդների կողմից հաշիվների դիսկրետ վճարումներ և մատակարարների հաշիվների դիսկրետ վճարումներ: Ենթադրվում է, որ հաշիվների վճարումն իրականացվում է ամբողջությամբ որոշակի ժամանակահատվածից հետո, որի տևողությունը համապատասխանում է տվյալ պարտավորության շրջապտույտի

տնողությանը: Այդպիսով հաշվարկվում է ընթացիկ իրացվելիության գործակցի առավելագույն թույլատրելի արժեքը:

Վերլուծվող ընկերությունների ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակների համեմատական գնահատականը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

«Հ ոգելից խմիչքներ արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունների ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակների համեմատական վերլուծությունը»

Ցուցանիշների անվանումը	Ա/Ն	Արժեք									
		2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
«ՍԱՊ» ՓԲԸ											
Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակը «մեղմ» տարբերակի հաշվարկով	ԳՀԱԲԻՆ-Սեղմ	3,690	2,505	1,944	1,927	2,199	2,517	2,507	2,367	2,285	2,149
Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակը «խիստ» տարբերակի հաշվարկով	ԳՀԱԲԻՆ-խիստ	3,690	2,505	4,701	15,468	9,232	4,572	3,616	3,185	2,897	3,032
Ընթացիկ իրացվելիության գործակցի փաստացի մակարդակ	ԳՀԻՓ	0,97*	1,94	8,72*	12,49*	11,04	8,97	8,69	8,44	8,27	8,27
«Վեդի Ակո» ՓԲԸ											
Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակը «մեղմ» տարբերակի հաշվարկով	ԳՀԱԲԻՆ-Սեղմ	-	-	3,917	2,464	2,543	3,473	3,656	2,921	2,353	1,850
Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակը «խիստ» տարբերակի հաշվարկով	ԳՀԱԲԻՆ-խիստ	-	-	4,651	3,041	2,547	3,732	6,458	4,827	3,752	3,366
Ընթացիկ իրացվելիության գործակցի փաստացի մակարդակ	ԳՀԻՓ	-	-	1,5	1,56	2,14	3,21	4,0	6,26	6,55	3,276
«Երևանի Արարատ Կոնյակի-Գինու-Օղու Կոմբինատ» ԲԲԸ											
Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակը «մեղմ» տարբերակի հաշվարկով	ԳՀԱԲԻՆ-Սեղմ	-	-	-	1,747	1,845	1,973	2,340	2,473	2,522	2,456
Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակը «խիստ» տարբերակի հաշվարկով	ԳՀԱԲԻՆ-խիստ	-	-	-	3,336	3,783	15,395	2,876	2,733	2,742	2,571
Ընթացիկ իրացվելիության գործակցի փաստացի մակարդակ	ԳՀԻՓ	-	-	-	7,96	7,93	12,96	14,14	7,63	7,84	4,346
Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ											
Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակը «մեղմ» տարբերակի հաշվարկով	ԳՀԱԲԻՆ-Սեղմ	-	3,144	2,587	2,959	3,232	3,240	3,032	2,662	2,786	3,043
Ընթացիկ իրացվելիության գործակցի բավարար մակարդակը «խիստ» տարբերակի հաշվարկով	ԳՀԱԲԻՆ-խիստ	-	4,860	6,067	6,779	5,987	6,885	6,918	6,662	12,891	9,273
Ընթացիկ իրացվելիության գործակցի փաստացի մակարդակ	ԳՀԻՓ	-	2,936	3,130	2,763	2,627	3,156	3,636	4,320	3,904	2,585

* Փոքր է «մեղմ» տարբերակով հաշվարկված գործակցի բավարար արժեքի; ■ Գերազանցում է «խիստ» տարբերակով հաշվարկված գործակցի բավարար արժեքը; ■ Կտնվում է օպտիմալ միջակայքում:

«ՍԱՊ» ՓԲԸ ընթացիկ իրացվելիության գործակցի նվազագույն բավարար մակարդակը 2010-2011թթ. (համապատասխանաբար 3,690 և 2,505) զգալիորեն գրազանցում է միջազգային պրակտիկայում այդ ցուցանիշի համար սահմանված նորմատիվային նվազագույն արժեքը (2): 2012-2019թթ ընթացիկ իրացվելիության գործակցի փաստացի մակարդակը զգալիորեն գերազանցում է նաև «խիստ» տարբերակով հաշվարկված գործակցի բավարար մակարդակը, ինչը վկայում է ընթացիկ ակտիվներում զգալի միջոցների սառեցման մասին:

«Երևանի Արարատ Կոնյակի-Գինու-Օղու Կոմբինատ» ԲԲԸ-ում վերլուծվող բոլոր տարիներին ընթացիկ իրացվելիության գործակցի փաստացի մակարդակը զգալիորեն գերազանցում է ինչպես «մեղմ» այնպես էլ «խիստ» տարբերակով հաշվարկված գործակցի բավարար մակարդակները (բացառությամբ 2015 թ.):

«Վեդի Ակո» ՓԲԸ ընթացիկ իրացվելիության գործակցի փաստացի մակարդակները 2012-2015թթ. փոքր են այդ գործակցի թույլատրելի մակարդակներից: 2016թ. և 2019թ.-ին գործակցի փաստացի մակարդակները գերազանցել են «մեղմ» տարբերակով հաշվարկված բավարար մակարդակները, սակայն ցածր են առավելագույն թույլատրելի մակարդակներից: 2017-2018թթ գործակցի փաստացի արժեքները գերազանցել են նաև «խիստ» տարբերակով հաշվարկված բավարար մակարդակներին:

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ում 2011-2015թթ. (բացառությամբ 2012թ-ի «մեղմ» տարբերակի համար) և 2019թ-ին, գործակցի փաստացի մակարդակը փոքր է այդ գործակցի թույլատրելի մակարդակներից, չնայած այն զգալիորեն գերազանցում է միջազգային պրակտիկայում ընդունված նորմատիվային արժեքը: 2016-2018թթ. գործակցի փաստացի արժեքները գտնվում են «մեղմ» և «խիստ» տարբերակներով հաշվարկված գործակցի բավարար մակարդակների միջակայքում:

Աշխատանքի 2.3 պարագրաֆում ֆինանսական կայունության բազմաթիվ ցուցանիշների համադրման հիման վրա հիմնավորվել է, որ նշված ցուցանիշներից միայն չորսն ունեն համապարփակ կիրառություն՝ անկախ գործունեության և ակտիվների ու պասիվների կառուցվածքի բնույթից: Հիմնավորվել է, որ ֆինանսական կայունության տեսանկյունից կազմակերպության ֆինանսական դրության գնահատման համար առավել ամբողջական տեղեկատվություն են տալիս.

- անկախության կամ ինքնուրույնության գործակիցը,
- սեփական ընթացիկ ակտիվների (զուտ ընթացիկ ակտիվներ) մեծությունը,
- սեփական կապիտալի շարժունակության գործակիցը,
- սեփական միջոցներով պաշարների ապահովվածության գործակիցը:

Մնացած գործակիցների կիրառությունը սահմանափակվում է կամ գործունեության ոլորտով, կամ հաշվեկշռի կառուցվածքով:

Գնահատվել է կոնկրետ կազմակերպության համար ընթացիկ ժամանակահատվածում սեփական կապիտալի անհրաժեշտ (բավարար) մեծությունը.

Նվազագույն անհրաժեշտ սեփական կապիտալը(ՍԿ_ն)=առավել ոչ իրացվելի ակտիվներ:

Խնդիրն այստեղ առավել ոչ իրացվելի ակտիվների մեծության որոշումն է: Այս առումով ներքին ֆինանսական վերլուծության դեպքում յուրաքանչյուր կազմակերպության վերլուծաբանները պետք է դասակարգեն ակտիվները ըստ դրանց իրացվելիության մակարդակի և առանձնացնեն առավել ոչ իրացվելի ակտիվները: Արտաքին ֆինանսական վերլուծության դեպքում վերլուծաբանները չունեն այդպիսի հնարավորություն և այս դեպքում ոգելից խմիչքների արտադրության ոլորտում առաջարկում ենք առավել ոչ իրացվելի ակտիվներին դասել ոչ ընթացիկ ակտիվները, նյութական պաշարները, անավարտ արտադրությունն ու տրված ընթացիկ կանխավճարները.

Նվազագույն անհրաժեշտ սեփական կապիտալը = Ոչ ընթացիկ ակտիվներ + նյութական պաշարներ + անավարտ արտադրություն+ տրված ընթացիկ կանխավճարներ:


Համեմատելով հաշվարկային կարգով որոշված սեփական կապիտալի նվազագույն անհրաժեշտ գումարը սեփական կապիտալի փաստացի մեծության հետ, կարելի է եզրահանգումներ կատարել տվյալ կազմակերպությունում սեփական կապիտալի բավարարության կամ անբավարարության (դեֆիցիտի) վերաբերյալ:

Սեփական կապիտալի նվազագույն անհրաժեշտ մեծության հաշվարկը հնարավորություն է տալիս որոշելու փոխառու կապիտալի առավելագույն թույլատրելի մեծությունը հետևյալ կերպ.

Փոխառու կապիտալի առավելագույն թույլատրելի մեծությունը(ՓԿ_{առ}) = Հաշվեկշռի փաստացի հանրագումար - սեփական կապիտալի նվազագույն անհրաժեշտ մեծություն:

Տվյալ կազմակերպության համար ինքնուրույնության գործակցի բավարար (նվազագույն) մակարդակը հաշվարկվում է որպես սեփական կապիտալի նվազագույն անհրաժեշտ մեծության հարաբերությունը փոխառու կապիտալի առավելագույն թույլատրելի մեծությանը: Սեփական կապիտալի կենտրոնացման

գործակցի բավարար մակարդակը հաշվարկելու համար անհրաժեշտ է սեփական կապիտալի նվազագույն անհրաժեշտ մեծությունը հարաբերել ակտիվների փաստացի մեծությանը (հաշվեկշռի հանրագումարին): Հատկապես կարևոր վերլուծական տեղեկատվություն է տալիս գործակիցների փաստացի և բավարար (նվազագույն) մակարդակների տարբերությունը: Ըստ էության այդ տարբերության դրական մեծությունը կարելի է անվանել ֆինանսական անկախության պաշար, իսկ բացասական մեծությունը՝ ֆինանսաան կախվածության մակարդակ:



Գծապատկեր 1 ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունների սեփական կապիտալի կենտրոնացման գործակցի փաստացի և բավարար մակարդակների հարաբերակցության համեմատական բնութագիրը

Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ բոլոր 4 ընկերություններում էլ ֆինանսական անկախության տեսանկյունից առկա են խնդիրներ: Համեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ ֆինանսական կախվածության մակարդակը համեմատաբար ավելի բարձր է «Երևանի Արարատ Կոնյակի-Գինու-Օղու Կոմբինատ» ԲԲԸ-ում և «ՄԱՊ» ՓԲԸ-ում: Այս ընկերություններում սեփական կապիտալի կենտրոնացման գործակցի փաստացի և բավարար (նվազագույն) մակարդակների հարաբերակցությունը 2019թ-ին կազմում է համապատասխանաբար 0,2196 և 0,1905: Այսինքն գործակցի փաստացի մակարդակները կազմում են այդ գործակցի բավարար (նվազագույն) մակարդակների 22 և 19 %-ը: Այդուհանդերձ, դինամիկայում այդ 2 ձեռնարկություններում սեփական կապիտալի կենտրոնացման գործակցի փաստացի և բավարար (նվազագույն) մակարդակների հարաբերակցությունը վերջին տարիներին աճի միտում է դրսևորում: «Վեդի Ավյո» ՓԲԸ-ում այդ ցուցանիշի արժեքը 2019 թ-ին կազմում է 67,7%, իսկ Երևանի «Շամայա գինիների գործարան» ԲԲԸ-ում՝ 59,8 %:

Որոշվել են նաև սեփական կապիտալի շարժունակության գործակցի և սեփական միջոցներով ընթացիկ ակտիվների ապահովվածության գործակցի նվազագույն թույլատրելի արժեքները:

Ատենախոսության երրորդ՝ «Կազմակերպությունների ֆինանսական վիճակի գնահատման կատարելագործման ուղիները» գլխում մշակվել է վճարունակության գնահատման այլընտրանքային մոտեցում, որի հիմքում դրվել է ընթացիկ ակտիվները դրամական միջոցների վերածվելու ժամանակաշրջանի և ընթացիկ պարտավորությունների մարման ժամանակահատվածի համադրելիությունը: Այն իրականացվում է հետևյալ քայլերով.

Քայլ 1. Հաշվարկվում է կարճաժամկետ պարտավորությունների շրջանառելիության տևողությունը:

Քայլ 2. Որոշվում է դեբիտորական պարտքերի (ԴՊ) գումարը, որը պետք է վերածվի դրամական միջոցների՝ կարճաժամկետ պարտավորությունների շրջապտույտի տևողության ժամանակահատվածին համապատասխան ժամանակահատվածում (ԴՊ_{ճԵԳ}):

Քայլ 3. Որոշվում է պաշարների գումարը, որը պետք է վերածվի դրամական միջոցների՝ կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողության ժամանակահատվածին համապատասխան ժամանակահատվածում (Պ_{ճԵԳ}):

Քայլ 4. Որոշվում է ընթացիկ ակտիվների ճշգրտված մեծությունը (ԸԱ_{ճԳ}):

Այն իրենից ներկայացնում է դրամական միջոցների, ընթացիկ ֆինանսական ակտիվների փաստացի գումարի (ԴՄՓ) և դեբիտորական պարտքերի ու պաշարների ճշգրտված մեծությունների գումարը:

Քայլ 5. Հաշվարկվում է վճարունակության (ընթացիկ իրացվելիության) գործակիցը (Գ_{ւճ})՝ ընթացիկ ակտիվների ճշգրտված (վերահաշվարկված) գումարը (ԸԱ_{ճԳ}) հարաբերելով ընթացիկ պարտավորությունների մեծությանը (ԸՄ):

Առաջարկվող մեթոդաբանությամբ հաշվարկվող վճարունակության գործակցի մակարդակը կարելի է դիտարկել որպես կազմակերպության անվճարունակության ռիսկի չափանիշ: Կազմակերպությունը կարելի է համարել վճարունակ, եթե վճարունակության գործակիցը հավասար է 1-ի:

Աղյուսակ 5

«Հ ՈՒՅԻՅՆ ԽԱՄԻՇՆԵՐԻ ՈՂՐՈՒՄ ԱՐԹՈՂ ԿԱԶՄԱԿԵՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱԳՎԵԼԻՈՒԹՅԱՆ և ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՐԾԱԿԻԿՑՆԵՐԻ ԽԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՐԹՅՆԵՐԻ»⁷

Տարեթիվ	Վճարունակության (ընթացիկ իրացվելիության) գործակից											
	«ՄԱՄ» ՓԲԸ			«Վեդի Ավո» ՓԲԸ			«Երևանի Արարատ Կոնյակի Գինու Օղու Կոմբինատ» ԲԲԸ			Երևանի «Շամայան գինիների գործարան» ԲԲԸ		
	ըստ հաշվարկի ավանդական	ըստ արաջարկվող մոտեցման	ըստ արաջարկվող մոտեցման	ըստ հաշվարկի ավանդական	ըստ արաջարկվող մոտեցման	ըստ արաջարկվող մոտեցման	ըստ հաշվարկի ավանդական	ըստ արաջարկվող մոտեցման	ըստ հաշվարկի ավանդական	ըստ արաջարկվող մոտեցման	ըստ հաշվարկի ավանդական	ըստ արաջարկվող մոտեցման
2010	0,972	0,972	0,877									
2011	1,941	1,294	1,171							2,936	1,520	1,398
2012	8,720	1,574	1,573	1,504	1,103	0,929				3,130	1,703	1,608
2013	12,493	1,600	1,579	1,557	1,217	1,149	7,961	1,899	1,775	2,763	1,566	1,444
2014	11,041	1,687	1,680	2,144	1,448	1,391	7,935	1,944	1,724	2,627	1,474	1,375
2015	8,971	1,758	1,751	3,210	1,616	1,505	12,963	1,956	1,757	3,156	1,636	1,508
2016	8,689	1,771	1,793	3,999	1,750	1,690	14,136	1,915	1,995	3,636	1,741	1,632
2017	8,435	1,734	1,784	6,265	1,685	1,747	7,634	1,834	1,930	4,320	1,673	1,600
2018	8,273	1,696	1,848	6,548	1,596	1,748	7,845	1,884	1,972	3,904	1,740	1,622
2019	8,278	1,663	1,800	3,276	1,475	1,475	4,346	1,595	1,480	2,585	1,487	1,392

Հետազոտության 3.2 պարագրաֆում մշակվել են մատրիցային հաշվեկշիռ նորացված և կատարելագործված տարբերակի կառուցման սկզբունքներ ու մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել կազմակերպության ֆինանսավորման համապատասխան աղբյուրներով ակտիվների ապահովվածության մակարդակը: Այս համատեքստում առաջարկվել են ՀՀ ռզելից խմիչքների արտադրության ոլորտում Ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ծածկման առաջարկվող հաջորդականություն և ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության գնահատման քառաստիճան համակարգ:

Մատրիցային հաշվեկշիռների տվյալների հիման վրա կարելի է կիրառել եռաբաղադրիչ ցուցանիշ և գնահատել ֆինանսավորման համապատասխան աղբյուրներով ակտիվների ապահովվածության մակարդակը: Այս առումով առաջարկում ենք առանձնացնել համապատասխան աղբյուրներով ակտիվների ապահովվածության խախտման 3 իրավիճակ.

1. Ոչ ընթացիկ ակտիվների ֆինանսավորում ընթացիկ պարտավորությունների հաշվին;
 2. Առավել ոչ իրացվելի ընթացիկ ակտիվների ֆինանսավորում ընթացիկ պարտավորությունների հաշվին;
 3. Բացարձակ և արագ իրացվելի ընթացիկ ակտիվների ֆինանսավորում երկարաժամկետ պասիվների հաշվին:
- Եթե համապատասխան բաղադրիչի մասով մատրիցային հաշվեկշիռում խախտում

⁷ Առաջարկված մոտեցմամբ վճարունակության գործակցի հաշվարկները՝ ըստ ՀՀ ռզելից խմիչքների ոլորտում գործող վերլուծվող առանձին ձեռնարկությունների, ներկայացված են հավելված 14-ում

չի արձանագրվել, ապա եռաբաղադրիչ ցուցանիշում նշվում է 1, իսկ խախտում արձանագրված բաղադրիչի մասով՝ 0:

Այս առումով առանձնացրել ենք ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության չորս աստիճան.

1. **Ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության բացարձակ աստիճան**, երբ եռաբաղադրիչ ցուցանիշում երեք բաղադրիչների գծով էլ 1 է արձանագրվում (1;1;1):

2. **Ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության նորմալ աստիճան**, երբ եռաբաղադրիչ ցուցանիշում առաջին երկու բաղադրիչների գծով արձանագրվում է 1, իսկ վերջին բաղադրիչի գծով՝ 0 (1;1;0):

3. **Ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության ռիսկային աստիճան**, երբ եռաբաղադրիչ ցուցանիշում առաջին և երրորդ, կամ երկրորդ և երրորդ բաղադրիչների գծով արձանագրվում է 1, իսկ համապատասխանաբար երկրորդ կամ առաջին բաղադրիչի գծով՝ 0 (1;0;1; 0;1;1):

4. **Ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության ճգնաժամային աստիճան**: Այս դեպքում եռաբաղադրիչ ցուցանիշում մեկ բաղադրիչի գծով արձանագրվում է 1, իսկ երկու բաղադրիչների գծով՝ 0 (1;0;0; 0;1;0; 0;0;1):

Հաշվարկների ամփոփ արդյունքները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ծածկման ասիմանված համամասնությունների խախտման ամփոփ տվյալները և ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության աստիճանը⁸

	Տարեթիվ	«ՄԱՊ» ՓԲԸ		«Վեդի Ալկո» ՓԲԸ		«Երևանի Արարատ Կոնյակի-Գինու-Օղու Կոմբինատ» ԲԲԸ		Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ /hq.դր/	
		վիճակ	%	վիճակ	%	վիճակ	%	վիճակ	%
Ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության աստիճան	01.01.2011	(0;0;1)	94,1	-	-	-	-	(1;0;1)	16,1
	01.01.2012	(1;1;1)	-	-	-	-	-	(1;1;1)	-
	01.01.2013	(1;1;0)	42,4	(1;0;1)	55,4	(1;1;0)	55,8	(1;1;0)	10,2
	01.01.2014	(1;1;0)	56,7	(1;0;1)	30,7	(1;1;0)	27,4	(1;0;1)	20,0
	01.01.2015	(1;1;0)	48,7	(1;0;1)	4,4	(1;1;0)	47,3	(1;0;1)	2,4
	01.01.2016	(1;1;0)	42,3	(1;0;1)	5,1	(1;1;0)	43,0	(1;0;1)	3,2
	01.01.2017	(1;1;0)	54,3	(1;1;0)	22,4	(1;1;0)	23,6	(1;1;0)	24,6
	01.01.2018	(1;1;0)	53,0	(1;1;0)	68,9	(1;1;0)	14,2	(1;1;0)	40,1
	01.01.2019	(1;1;0)	67,8	(1;1;0)	52,5	(1;1;0)	50,5	(1;0;1)	4,4
	01.01.2020	(1;1;0)	62,2	(1;1;0)	18,7	(1;1;1)	-	(1;0;1)	27,4

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ «ՄԱՊ» ՓԲԸ-ում 2013-2020թթ., իսկ «Երևանի Արարատ Կոնյակի-Գինու-Օղու Կոմբինատ» ԲԲԸ-ում 2013-2019թթ. բոլոր տարիներին առկա են ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության նորմալ աստիճան: 01.01.2020թ-ի դրությամբ «Երևանի Արարատ Կոնյակի-Գինու-Օղու Կոմբինատ» ԲԲԸ-ում առկա է ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության բացարձակ աստիճան: «Վեդի Ալկո» ՓԲԸ-ում և Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ում նույն ժամանակահատվածում որոշ տարիներին առկա են ապահովվածության նորմալ աստիճան, իսկ որոշ տարիների նկատվում է Ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության ռիսկային աստիճան:


Հետազոտության 3.3 պարագրաֆում, ցուցանիշների ձևավորած համակարգի և դրանց արժեքների ընդունելի մակարդակների կիրառմամբ՝ հարաբերական

⁸ Աղյուսակը կազմվել է ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող վերլուծվող ձեռնարկությունների՝ հավելված 15-ում կառուցված ստատիկ մատրիցային հաշվեկշիռների տվյալների հիման վրա

կարևորության սանդղակի հիման վրա, մշակվել է ՀՀ խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի առանձին ուղղությունների և այդ վիճակը բնութագրող համապարփակ ինտեգրալ ցուցանիշի կառուցման մոտեցում, որը կազմակերպությունների ֆինանսական վիճակը գնահատում է տարբեր կողմերի և տալիս է գործոնային վերլուծություն իրականացնելու հնարավորություն:

Ստորակարգության (հիերարխիայի) վերլուծության մեթոդը իրենից ներկայացնում է որոշումների կայացմանն ուղղված խնդրի բաղադրիչներ հանդիսացող էլեմենտների ստորակարգության կարգով ներկայացման համակարգային ընթացակարգ:

Հաշվի առնելով աշխատանքի 2-րդ գլխում և 3.3 պարագրաֆի սկզբում ֆինանսական վիճակի գնահատման ուղղությունների և ցուցանիշների ընտրության ուղղությամբ ներկայացված հիմնավորումները, ինչպես նաև ֆինանսական դիագնոստիկայի միջազգային պրակտիկայում առավել լայն կիրառություն ունեցող ցուցանիշները, մեր կողմից առաջարկվում է ֆինանսական վիճակի համալիր գնահատման հետևյալ կառուցվածքը.



Գծապատկեր 2. Ֆինանսական վիճակի համալիր գնահատման ցուցանիշների կառուցվածքը

Ինտեգրալ ցուցանիշներում առանձին ֆինանսական գործակիցների կշիռը որոշվում է փորձագիտական մեթոդով՝ այդ ցուցանիշների հարաբերական կարևորության գնահատման ճանապարհով: Հարաբերական կարևորության մակարդակները որոշելիս, որպես փորձագետներ են հանդիսացել «ՄԱՊ» ՓԲԸ ֆինանսական, տնտեսագիտական ծառայությունների աշխատակիցները և ատենախոսության հեղինակը: Մշակված մեթոդաբանությամբ ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի համար ստացվել են հետևյալ ինտեգրալ ցուցանիշները.

- Ֆինանսական կայունության ամփոփ ինտեգրալ ցուցանիշ. $K_{\text{ՖՀ}} = 0,58 * Գ_{\text{ու4}} + 0,31 * Գ_{\text{շաթթ}} + 0,11 * Գ_{\text{ուոյ}}$
- Վճարունակության ամփոփ ինտեգրալ ցուցանիշ. $K_{\text{ՎՃ}} = 0,63 * Գ_{\text{ԸԻ}} + 0,26 * Գ_{\text{ԱԻ}} + 0,11 * Գ_{\text{ԲԻ}}$
- Շահութաբերության ամփոփ ինտեգրալ ցուցանիշ. $K_{\text{ՇԲ}} = 0,75 * ԾԲ_{\text{Ա}} + 0,25 * ԾԲ_{\text{ՍԿ}}$
- Շրջանառելիության ամփոփ ինտեգրալ ցուցանիշ. $K_{\text{ՇՐՁ}} = 0,83 * ԾՐՁ_{\text{Ա}} + 0,17 * ԾՐՁ_{\text{ՍԿ}}$

Ստացված ընդհանրացնող ցուցանիշները կարող են արդյունավետ կիրառվել նաև ձեռնարկության գործունեության համապատասխան ֆինանսական ուղղությունների անկախ դիագնոստիկայի գործընթացում:

Ֆինանսատնտեսական դիագնոստիկայի հաջորդ փուլում կառուցվել է **ֆինանսական վիճակի համալիր ինտեգրալ ցուցանիշը**. $K_{\text{ՖՀ}} = 0,11 * K_{\text{ՖՀ}} + 0,3 * K_{\text{ՎՃ}} + 0,48 * K_{\text{ՇԲ}} + 0,11 * K_{\text{ՇՐՁ}}$

Աղյուսակ 7-ում ներկայացված է վերլուծվող կազմակերպությունների ֆինանսական վիճակը բնութագրող ամփոփ ինտեգրալ ցուցանիշների համեմատական գնահատումը 2010-2019թթ. կտվածքով.

Ֆինանսական վիճակը բնութագրող ամփոփ ինտեգրալ ցուցանիշների համեմատական վերլուծությունը

Ցուցանիշ	Վերլուծվող ժամանակահատվածը													
	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019				
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի նվազագույն արժեքը ըստ միջազգային պրակտիկայում ընդունված նորմատիվային արժեքների	0,431													
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի առավելագույն նախընտրելի արժեքը ըստ միջազգային պրակտիկայում ընդունված նորմատիվային արժեքների «ԱՄԻ», ՓԲԸ	0,787													
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի նվազագույն շեմային արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության	1,062	0,820	0,700	0,693	0,750	0,815	0,817	0,796	0,790	0,770				
Ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի առավելագույն թույլատրելի արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության (Ֆինանսական կայունության, շահութաբերության և շրջանառելիության ցուցանիշների նվազագույն թույլատրելի արժեքների պայմաններում՝ իրազմելիության գործակիցների առավելագույն թույլատրելի մեծությունները հաշվի առած)	1,062	0,820	1,251	3,426	2,184	1,236	1,045	0,966	0,921	0,961				
Ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի առավելագույն թույլատրելի արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության (Ֆինանսական կայունության, շահութաբերության և շրջանառելիության ցուցանիշների փաստացի արժեքների պայմաններում՝ իրազմելիության գործակիցների առավելագույն թույլատրելի մեծությունները հաշվի առած)	1,352	0,506	0,983	3,170	1,759	0,928	0,724	0,646	0,650	0,773				
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի փաստացի արժեքները	0,802	0,393	1,786	2,569	2,128	1,830	1,771	1,744	1,794	1,904				
«Երևանի Արարատ Կոնսալթինգ-Օնլայն Կոմբինատ» ԲԲԸ														
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի նվազագույն շեմային արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության						0,658	0,676	0,690	0,762	0,804	0,817	0,802		
Ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի առավելագույն թույլատրելի արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության (Ֆինանսական կայունության, շահութաբերության և շրջանառելիության ցուցանիշների նվազագույն թույլատրելի արժեքների պայմաններում՝ իրազմելիության գործակիցների առավելագույն թույլատրելի մեծությունները հաշվի առած)						0,986	1,075	3,384	0,868	0,856	0,861	0,825		
Ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի առավելագույն թույլատրելի արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության (Ֆինանսական կայունության, շահութաբերության և շրջանառելիության ցուցանիշների փաստացի արժեքների պայմաններում՝ իրազմելիության գործակիցների առավելագույն թույլատրելի մեծությունները հաշվի առած)						0,807	0,849	2,946	0,588	0,631	0,712	0,759		
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի փաստացի արժեքները						1,761	1,706	2,457	2,811	1,619	1,747	1,118		
«Վեդի Ալկո» ՓԲԸ														
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի նվազագույն շեմային արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության						1,111	0,869	0,876	1,045	1,084	0,939	0,828	0,752	
Ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի առավելագույն թույլատրելի արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության (Ֆինանսական կայունության, շահութաբերության և շրջանառելիության ցուցանիշների նվազագույն թույլատրելի արժեքների պայմաններում՝ իրազմելիության գործակիցների առավելագույն թույլատրելի մեծությունները հաշվի առած)						1,261	0,995	0,877	1,099	1,671	1,346	1,134	1,091	
Ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի առավելագույն թույլատրելի արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության (Ֆինանսական կայունության, շահութաբերության և շրջանառելիության ցուցանիշների փաստացի արժեքների պայմաններում՝ իրազմելիության գործակիցների առավելագույն թույլատրելի մեծությունները հաշվի առած)						1,091	0,966	0,679	0,92	1,527	1,317	1,088	1,117	
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի փաստացի արժեքները						0,448	0,642	0,591	0,810	1,012	1,624	1,700	1,097	
Երևանի «Հանսայն Գինիներեի գործարար» ԲԲԸ														
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի նվազագույն շեմային արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության						0,954	0,855	0,930	0,980	0,982	0,946	0,878	0,892	0,941
Ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի առավելագույն թույլատրելի արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության (Ֆինանսական կայունության, շահութաբերության և շրջանառելիության ցուցանիշների նվազագույն թույլատրելի արժեքների պայմաններում՝ իրազմելիության գործակիցների առավելագույն թույլատրելի մեծությունները հաշվի առած)						1,278	1,607	1,747	1,562	1,754	1,777	1,737	3,049	2,257
Ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի առավելագույն թույլատրելի արժեքը ըստ առաջարկվող մեթոդաբանության (Ֆինանսական կայունության, շահութաբերության և շրջանառելիության ցուցանիշների փաստացի արժեքների պայմաններում՝ իրազմելիության գործակիցների առավելագույն թույլատրելի մեծությունները հաշվի առած)						1,132	1,482	1,556	1,388	1,581	1,673	1,661	2,858	2,065
Ֆինանսական վիճակի ընդհանրացնող ցուցանիշի փաստացի արժեքները						0,765	0,847	0,697	0,678	0,792	0,972	1,162	0,939	0,652

Եթե հաշվի առնենք 2.2 պարագրաֆում հաշվարկված իրազմելիության գործակիցների նվազագույն բավարար և առավելագույն նախընտրելի

մեծությունները, ապա ակնհայտ է դառնում, որ 2010-2011թթ «ՄԱՊ» ՓԲԸ ֆինանսական վիճակի ինտեգրալ ցուցանիշների փաստացի արժեքները ցածր են տվյալ կազմակերպության համար սահմանված նվազագույն շեմային արժեքներից, ինչը վկայում է կազմակերպության ոչ կայուն ֆինանսական վիճակի մասին: 2012-2019թթ. ժամանակահատվածում ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի փաստացի արժեքները բոլոր տարիներին զգալիորեն գերազանցում են այդ ցուցանիշի նվազագույն շեմային արժեքները: 2013թ. ինտեգրալ ցուցանիշի փաստացի արժեքը գտնվում է օպտիմալ միջակայքում և վկայում է կազմակերպության կայուն ֆինանսական վիճակի մասին: Դրանով հանդերձ, այստեղ ևս ֆինանսական բարվոք վիճակն ապահովված է վճարունակության ինտեգրալ ցուցանիշի բարձր մակարդակի հաշվին, իսկ ահա մյուս բաղադրիչների գծով առկա են խնդիրներ:

Հաշվարկների արդյունքներից ակնհայտ է դառնում, որ «Երևանի Արարատ Կոնյակի-Գինու-Օղու Կոմբինատ» ԲԲԸ ֆինանսական վիճակի ինտեգրալ ցուցանիշները վերլուծվող բոլոր տարիներին բարձր են տվյալ կազմակերպության համար սահմանված նվազագույն շեմային արժեքներից: Դրանով հանդերձ, միայն 2015թ-ին է այդ ցուցանիշը գտնվում օպտիմալ միջակայքում, ինչը վկայում է կազմակերպության ֆինանսական վիճակի բարելավման մասին: Սակայն այստեղ ևս պետք է նշել, որ վերլուծվող ժամանակահատվածում ֆինանսական վիճակի ամփոփ ինտեգրալ ցուցանիշի բարելավվումը տեղի է ունեցել բացառապես վճարունակության բաղադրիչի հաշվին:

«Վեդի Ալկո» ՓԲԸ ֆինանսական վիճակի ինտեգրալ ցուցանիշի փաստացի արժեքները 2012-2016թթ. բոլոր տարիներին զգալիորեն զիջում են տվյալ կազմակերպության համար սահմանված նվազագույն շեմային արժեքները: Ընդ որում, այդպիսի դիֆիցիտ նկատվում է ֆինանսական վիճակի ինտեգրալ ցուցանիշի բոլոր բաղադրիչների գծով: Սակայն հարկ է նշել, որ «Վեդի Ալկո» ՓԲԸ-ում դինամիկայում նկատվում է ֆինանսական վիճակի ինտեգրալ ցուցանիշի բարելավվում: 2017-2018թթ. ինտեգրալ ցուցանիշի փաստացի արժեքները գերազանցում է ինչպես նվազագույն բավարար, այնպես էլ առավելագույն նախընտրելի արժեքները, իսկ 2019թ-ին՝ այն գտնվում է օպտիմալ միջակայքում:

Երևանի «Շամայայն գինիների գործարան» ԲԲԸ ֆինանսական վիճակի ինտեգրալ ցուցանիշի փաստացի արժեքները 2011-2015թթ., ինչպես նաև 2019թ.-ին զիջում են տվյալ կազմակերպության համար սահմանված նվազագույն շեմային արժեքները: Դեֆիցիտ նկատվում է ֆինանսական վիճակի ինտեգրալ ցուցանիշի բոլոր բաղադրիչների գծով: 2016-2018թթ. ինտեգրալ ցուցանիշի փաստացի արժեքները գտնվում են օպտիմալ միջակայքում:

Ալթմանի զարգացող շուկաների համար կառուցված Z մոդելի հիման վրա կատարված հաշվարկների արդյունքներով բոլոր 4 ընկերությունները վերլուծվող բոլոր տարիներին գտնվում են կանաչ, այսինքն ֆինանսական կայունության գոտում: Մինչդեռ հեղինակային մեթոդաբանության հիման վրա կատարված ֆինանսական վիճակը բնութագրող ամփոփ ինտեգրալ ցուցանիշները ցույց են տալիս, որ տարբեր վերլուծվող կազմակերպությունները, տարբեր տարիների ունեն ֆինանսական վիճակի տարբեր մակարդակներ:

Մեր կարծիքով, ըստ մշակված մեթոդաբանության հաշվարկված ցուցանիշները առավել ամբողջական և ճշգրիտ են գնահատում կազմակերպության ֆինանսական վիճակը, քանի որ, այս դեպքում հաշվի է առնված առանձին կոնկրետ

ծեռնարկության ակտիվների և պասիվների կառուցվածքը, ըստ առանձին խմբերի՝ դեբիտորների և կրեդիտորների հետ հաշվարկների պայմանները, ինչպես նաև տվյալ ձեռնարկության գործունեության արդյունավետությունը բնութագրող առանձին ցուցանիշների գնահատման կոնկրետ պայմանները: Բացի դա, հեղինակային մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել ինչպես ամփոփ ինտեգրալ ցուցանիշի, այնպես էլ դրա առանձին բաղադրիչների փոփոխությունների պատճառները, և իրականացնել գործոնային վերլուծություն՝ պահուստների բացահայտման նպատակով:

Ատենախոսության «**Եզրակացություններ**» բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները:

1. Ժամանակակից գրականության և ֆինանսական վերլուծության ոլորտի ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ գոյություն ունեն ընկերության ֆինանսական վիճակի վերլուծության մեծ թվով մեթոդաբանություններ, որոնցում սակայն հաշվի չեն առնված առանձին երկրի տնտեսության զարգացման մակարդակը, առանձին ոլորտների և առանձին ձեռնարկությունների գործունեության առանձնահատկությունները:

2. Հաշվի առնելով «**Ֆինանսական վիճակ**» կատեգորիայի մեկնաբանությունների բազմազանությունը, տնտեսական վերլուծության արդյունքներն օգտագործողների լայն շրջանակի առկայությունն ու առանձին դեպքերում նրանց տեղեկատվական նպատակների անհամապատասխանությունը, ինչպես նաև առանձին տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտի և միջավայրի առանձնահատկությունները, անհրաժեշտություն է առաջանում կատարելագործել կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության մեխանիզմի տեսական և մեթոդաբանական մոտեցումները՝ այն կոնկրետ ՀՀ տնտեսության, առանձին ոլորտների և կոնկրետ կազմակերպությունների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

3. Մասնագիտական գրականությունում հաճախ նույնացվում են «**Ֆինանսական վերլուծություն**» և «**Ֆինանսական վիճակի վերլուծություն**» հասկացությունները: Ընդհանրացնելով հետազոտողների տարբեր տեսակետները, մեր կողմից տրվել է արտադրական ձեռնարկության ֆինանսական վիճակի հեղինակային սահմանում.:

4. Հաշվի առնելով տարբեր հեղինակների կարծիքները, մեր կողմից ձևակերպվել է ֆինանսական կայունության հեղինակային սահմանում:

5. Կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության մոտեցումների եւ մեթոդների բարելավման գործընթացը էվոլյուցիոն բնույթ է կրում, սակայն հարկ է նշել, որ դրա համար առկա են նաև օբյեկտիվ նախադրյալներ:

Նախ. նկատվում է ստանդարտ մոտեցումների կիրառմամբ ստացված արդյունքների մեկնաբանման սահմանված կանոններից բացառությունների թվի ավելացման միտում:

Երկրորդ. ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշները բարելավելու համար անհրաժեշտ է մշակել համապատասխան գործակիցների համակարգ և դրանց նորմատիվային արժեքներ՝ հաշվի առնելով տվյալ երկրի տնտեսության վիճակը, ձեռնարկության գործունեության ոլորտները, առանձին ձեռնարկությունների գործունեության առանձնահատկությունները:

Երրորդ. տարբեր հրատարակություններում միևնույն բանաձևերը կիրառելիս օգտագործվում են տարբեր տերմիններ, և հակառակը, միևնույն տերմինները վերագրվում են տարբեր գործակիցների, ինչպես նաև բանաձևերը կազմելիս

տարբեր պայմանական նշանակումներ ու հապավումներ են օգտագործվում: Միաժամանակ տարբեր մեթոդաբանություններում առկա են միևնույն տնտեսական բովանդակությամբ գործակիցների հաշվարկի առաջարկվող տարբեր մոտեցումներ:

Չորրորդ. մի շարք գործակիցների միջազգային պրակտիկայում ընդունված նորմատիվային արժեքները պետք է վերանայվեն, կապված ձեռնարկության ֆինանսական կառավարման հայեցակարգի փոփոխության հետ:

Հինգերորդ. լայնորեն կիրառվող գործակիցների հաշվարկը բացահայտում է կազմակերպության ֆինանսական վիճակի բարելավումը կամ վատթարացումը, սակայն չի բացատրում այդ փոփոխությունների պատճառները: Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձվի գործոնային վերլուծությանը:

6. Կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծությանը առնչվող մասնագիտական գրականության և դրանցում առաջադրված մեթոդաբանությունների հետազոտության արդյունքում մեր կողմից կատարվել են հետևյալ եզրահանգումները.

- Բացակայում են ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների հաշվարկման և դրանց արդյունքների մեկնաբանման միասնական մոտեցումները:

- Գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ շատ դժվար, իսկ երբեմն նույնիսկ անհնար է առանձին վերցված կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատման համար՝ միջազգային պրակտիկայում մշակված համապարփակ ցուցանիշների կիրառումը:

- Չկա համապատասխանություն տարբեր ոլորտների ձեռնարկությունների և նույնիսկ միևնույն ոլորտի առանձին ձեռնարկությունների համար ֆինանսական ցուցանիշների միջազգային պրակտիկայում սահմանված համընդհանուր նորմատիվների միջև:

- Առկա է առանձին ձեռնարկության կտրվածքով ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող գործակիցների համակարգի ներդրման և դրանց հաշվարկման ալգորիթմների մշակման անհրաժեշտություն:

- Տնտեսագիտության մեջ չկա կազմակերպության իրացվելիության գնահատման կոնկրետ և միասնական մեթոդաբանություն: Այս տեսանկյունից առկա է իրացվելիություն և վճարունակություն կատեգորիաների հստակ տարանջատման անհրաժեշտություն: Կազմակերպության իրացվելիության հասկացությունը ամբողջական չի արտացոլում իր ընթացիկ պարտավորությունները մարելու կազմակերպության ունակությունը: Կազմակերպության անվճարունակության ռիսկի առավել ճշգրիտ գնահատման համար անհրաժեշտ է կիրառել վճարունակություն հասկացությունը, որի գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների մեծությունը, այլ նաև կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետությունը:

- Ժամանակակից տնտեսական միջավայրում յուրաքանչյուր ձեռնարկության համար կարևոր խնդիր է հանդիսանում ձևավորման համապատասխան աղբյուրներով ակտիվների ֆինանսավորման արդյունավետ տարբերակի ընտրությունն ու դրա վրա խիստ վերահսկողության իրականացումը:

- Մնանկացման ռիսկի գնահատման արևմտյան մոդելների և դրանցում կիրառվող գործակիցների նկատմամբ սահմանված կշիռները չեն համապատասխանում հայկական կազմակերպություններին և այլն:

7. Հայկական ընկերություններում ֆինանսական վերլուծության ավանդական ալգորիթմի կիրառման առումով առկա են որոշակի խնդիրներ, մասնավորապես.

- Հիմնականում հայկական ընկերություններում չի իրականացվում խորը

Ֆինանսական վերլուծություն, ինչը պայմանավորված է մի կողմից վերլուծության դերի ու նշանակության ոչ հիմնավորված թերագնահատմամբ, մյուս կողմից, արհեստավարժ մասնագետների բացակայությամբ:

- Հայկական ընկերություններում շատ հաճախ ֆինանսական վերլուծությունը սահմանափակվում է կառուցվածքային հարաբերակցությունների, ցուցանիշների փոփոխության տեսակերի, ֆինանսական գործակիցների արժեքների հաշվարկներով: Այլ կերպ ասած, հետազոտության խորությունը լավագույն դեպքում սահմանափակվում է «բարելավման» կամ «վառթարացման» միտումների արձանագրմամբ: Խորը վերլուծական գիտելիքների չտիրապետող և բարձր որակավորում ու փորձ չունեցող մասնագետների համար ելքային տեղեկատվության հիման վրա անհնար է տալ համապատասխան եզրակացություններ և, առավել ևս, կատարել հիմնավոր առաջարկություններ կազմակերպության ֆինանսական դրության առկա վիճակի և դրա բարելավման ուղիների վերաբերյալ:

- Հարկ է նշել, որ ֆինանսական վերլուծության արդյունքների արժանահավատության առումով առկա են որոշակի ռիսկեր: Այդ ռիսկերը պայմանավորված են այն հանգամանքով, որ ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքները կարող են հիմնվել ոչ հավաստի տեղեկատվության վրա: Փաստացի ելքային տեղեկատվության հավաստիության գնահատման և, որպես արդյունք, ֆինանսական վիճակի վերլուծության իրական արդյունքներ ստանալու համար մեր օրենսդրությամբ առաջարկվում է սխալների ու խեղաթյուրումների հայտնաբերման համար անկախ աուդիտի անցկացում: Սակայն ՀՀ-ում աուդիտորական ծառայությունների շուկան դեռևս խորությամբ չի գործում, և աուդիտի առկայությունը որոշ դեպքերում սեփականատերերին չի խանգարում աղավաղել հաշվետվությունները: Մեր կարծիքով, աուդիտորական ընկերությունները պետք է ավելի մեծացնեն իրենց գործունեության մեջ վերլուծական ուղղվածությունը: Կազմակերպության ֆինանսական դրության բազմակողմանի վերլուծության իրականացումն ու դրա հիման վրա ֆինանսական դրության բարելավման ուղղությամբ հիմնավոր առաջարկների ներկայացումը կընդլայնեն աուդիտորական ծառայություններից օգտվելու ցանկություն ունեցող կազմակերպությունների շրջանակներն ու կնպաստեն աուդիտորական շուկայի զարգացմանը ՀՀ-ում:

- Հաջորդ խնդիրը կայանում է նրանում, որ ֆինանսական վիճակի վերլուծության մանրամասնեցման ձգտումը հանգեցրել է ֆինանսական գործակիցների ավելցուկային քանակի մշակմանը, հաշվարկին ու մակերեսային օգտագործմանը, առավել ևս, որ այդ գործակիցների մեծամասնությունը միմյանց հետ գորածառնական կախվածության մեջ են գտնվում: Մեր կարծիքով որակյալ ֆինանսական վերլուծություն իրականացնելու համար լիովին բավարար են վերլուծության յուրաքանչյուր ուղղության գծով 2-3 գործակիցների օգտագործումը: Գործակիցների մեծ թվի օգտագործումը հանգեցնում է աշխատատարության զգալի աճի, որի հատույցը կամ շատ փոքր է (արդյունքների վրա էական ազդեցություն չունեցող), կամ ընդհանրապես բացակայում է:

- Հայկական ընկերությունների ֆինանսական դրության համեմատական վերլուծությունը գործնականում անհնար է համապատասխան և բավարար նորմատիվային բազայի և միջին ճյուղային հրապարակվող ցուցանիշների բացակայության պատճառով:

- Հաշվառման և ֆինանսական վերլուծության ոլորտի մի շարք հետազոտողներ նշում են ֆինանսական վիճակի վերլուծության ևս մի

առանձնահատկություն: Ըստ ներկայացված մեթոդաբանությունների, համապատասխան աղյուսակներում խմբավորված գործակիցները թույլ են տալիս դիտարկել ձեռնարկության գործունեությունը տարբեր տեսանկյուններից, սակայն դրանց հիման վրա միանշանակ եզրակացությունների ստացումը բարդ գործընթաց է: Այդ մեթոդաբանությունների հիման վրա ստացված արդյունքներով դժվար է սահմանել ու ձևավորել գործողությունների հստակ ծրագիր: Այդ նպատակով, անհրաժեշտ է լրացուցիչ վերլուծել ըստ առանձին ուղղությունների ստացված արդյունքները:

8. Հայկական ձեռնարկությունների ֆինանսական վիճակի վերլուծության մասին ամբողջ վերոնշվածը ոչ մի կերպ չի նսեմացնում զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում փորձարկված ու կարգավորված վերլուծության ավանդական մոտեցման նշանակությունը: Ավանդական մոտեցումը ՀՀ տնտեսությանը հարմարացնելը, ֆինանսական վերլուծությանը հնարավորություն կտա ոչ միայն մնալ ֆինանսական կառավարման անբաժանելի տարր, այլ նաև կբարելավի ընդունվող կառավարչական որոշումների հիմնավորվածությունը:

Հաշվի առնելով վերը թվարկված մոտեցումները, եզրակացություններն ու փաստարկները, մեր կողմից ֆինանսական վերլուծության ամփոփիչ ընթացակարգերի հետագա կատարելագործման ուղղությամբ իրականացվել են ներքոնշյալ միջոցառումները, որոնք, մեր կարծիքով, կնպաստեն ֆինանսական վերլուծության ավանդական ալգորիթմը հայկական իրականությանը հարմարեցմանն ու կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության ու գնահատման գործընթացի կատարելագործմանը.

✓ Վերլուծության համար անհրաժեշտ ֆինանսական գործակիցների նեղ (սահմանափակ թվով) շրջանակի առանձնացում, որոնց կազմը տարբեր կազմակերպությունների համար կարող է տարբեր լինել:

✓ Կոնկրետ կազմակերպության համար ընտրված ֆինանսական գործակիցների գծով նորմատիվների կամ նվազագույն (առավելագույն) թույլատրելի արժեքների հաշվարկ և փաստացի ցուցանիշների համեմատում ստացված արդյունքների հետ:

✓ Վճարունակության գնահատման այլընտրանքային մեթոդաբանության մշակում, որի հիմքում դրվել է ընթացիկ ակտիվները դրամական միջոցների վերաձվելու ժամանակաշրջանի և ընթացիկ պարտավորությունների մարման ժամանակահատվածի համադրելիությունը և որի հիման վրա հաշվարկվող վճարունակության գործակցի մակարդակը կարելի է դիտարկել որպես կազմակերպության անվճարունակության ռիսկի չափանիշ:

✓ Մատրիցային հաշվեկշռի նորացված և կատարելագործված տարբերակի կառուցման սկզբունքների ու մոտեցումների մշակում, որը հնարավորություն է տալիս գնահատել կազմակերպության ֆինանսավորման համապատասխան աղբյուրներով ակտիվների ապահովվածության մակարդակը:

✓ Ցուցանիշների ձևավորած համակարգի և դրանց արժեքների ընդունելի մակարդակների կիրառմամբ, ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի և դրա առանձին ուղղությունների ինտեգրալ ցուցանիշների կառուցում, որոնք կազմակերպությունների ֆինանսական վիճակը գնահատում են տարբեր կողմերից և տալիս են գործոնային վերլուծություն իրականացնելու հնարավորություն:

✓ Կազմակերպության ֆինանսական գործունեության և ֆինանսական

վիճակի վերաբերյալ եզրակացության տիպային ձևաչափի մշակում, որում ոչ միայն արձանագրվում են վերլուծվող կազմակերպությունում առկա խնդիրները, այլ նաև ցույց են տրվում այն գործոնները, որոնք տվյալ պահին ազդում և հետագայում կարող են ազդել ֆինանսական դրության փոփոխության վրա, և առաջարկվում են այն միջոցառումները, որոնք կբերեն կազմակերպության ֆինանսական առողջացմանն ու ֆինանսական դրության բարելավմանը:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Տ. Ռ. Մանուկյան, Մատրիցային հաշվեկշիռը որպես խմիչքի արտադրության ոլորտի ձեռնարկությունների վճարունակության ապահովման գործիք: «Ֆինանսներ և էկոնոմիկա», հ.3 (153), մարտ 2013, էջ 53-55:
2. Տ. Ռ. Մանուկյան, Կազմակերպության վճարունակության գնահատման կատարելագործման ուղիները ՀՀ ոգելից խմիչքների (կոնյակի) արտադրության օրինակով: Մարզերի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: /Հանրապետական գիտաժողովի նյութեր. Եղեգնաձոր 2014. էջ 307-319:
3. Տ. Ռ. Մանուկյան, Արտադրական կազմակերպությունների ֆինանսական դրության վատթարացման պատճառների համակարգման հիմնական մոտեցումները: Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր, Երևան 2014թ. էջ 443-449:
4. Տ. Ռ. Մանուկյան, Զուտ ընթացիկ ակտիվների նվազագույն անհրաժեշտ մեծության գնահատման և գործոնային վերլուծության մեթոդաբանությունը ՀՀ ոգելից խմիչքների (կոնյակի) արտադրության օրինակով: Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի , հ.1 (33), - Երևան: Տնտեսագետ, 2014, էջ107-116:
5. Տ. Ռ. Մանուկյան, Ընթացիկ իրացվելիության գործակցի նվազագույն բավարար արժեքի էությունն ու դրա գնահատման մեթոդաբանությունը ՀՀ ոգելից խմիչքների (կոնյակի) արտադրության օրինակով: Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում: ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2015թ. էջ 485-492
6. Т.Р.Манукян, КОМПЛЕКСНАЯ ОЦЕНКА ФИНАНСОВОГО СОСТОЯНИЯ ПРОИЗВОДСТВЕННОГО ПРЕДПРИЯТИЯ ПО МЕТОДУ АНАЛИЗА ИЕРАРХИИ. Материалы XI Международной научно-практической конференции «СОВРЕМЕННАЯ НАУКА: ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ» (25 декабря 2015 г.): Сборник научных статей: Краснодар 2015 г.; ст. 145-155.
7. Տ. Ռ. Մանուկյան, «Զուտ ընթացիկ ակտիվներ» և «Սեփական ընթացիկ ակտիվներ» կատեգորիաների տնտեսագիտական մեկնաբանություններն ու դրանց կիրառման ոլորտները ֆինանսական վերլուծության պրակտիկայում: «ԱՅԼՇՏՐԱՆՔ» եռամսյա գիտական հանդես. տնտեսագիտություն, գործարարություն, կառավարում, Հունվար – Մարտ, 2021թ. էջ 201-210:
8. Տ. Ռ. Մանուկյան, Ֆինանսական վերլուծության իրականացման միջազգային պրակտիկայում ընդունված ալգորիթմի կատարելագործման և ՀՀ արտադրական ոլորտի կազմակերպություններին համապատասխանեցման հիմնական ուղղությունները: «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն: «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, Երևան 2021, թիվ 2(13) էջ 74-83:

МАНУКЯН ТИГРАН РАЗМИКОВИЧ
ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ АНАЛИЗА И ОЦЕНКИ ФИНАНСОВОГО
СОСТОЯНИЯ (ПО МАТЕРИАЛАМ ПРОИЗВОДСТВА НАПИТКОВ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03-“Финансы, бухгалтерский учет”

Защита диссертации состоится 21-ого октября 2021 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете. Адрес: 0025, Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования. Многоаспектность категории «финансовое состояние», наличие широкого круга пользователей экономического анализа и в отдельных случаях противоречивость их информационных целей, а также отраслевые особенности сферы деятельности отдельных хозяйствующих субъектов, вызывают необходимость совершенствования теоретико-методических подходов к механизму анализа финансового состояния организаций, с целью его адаптации к конкретным условиям отдельных отраслей и конкретных организаций экономики РА

Цель исследования и задачи. Цель диссертационного исследования - на основе всестороннего изучения международного и отечественного опыта анализа финансового состояния, разработка совершенствования теоретических и методологических основ анализа и диагностики финансового состояния предприятий сферы алкогольных напитков РА и выполнение практических предложений по их внедрению.

Реализация этой цели требует разработки и решения следующих основных задач:

- всестороннее изучение и критическая оценка существующих подходов, точек зрения, взглядов, принципов понимания категории «финансовый анализ», относительно анализа финансового состояния в нормативных правовых актах, трудах отечественных и зарубежных авторов,
- всестороннее изучение и интерпретация причин изменения финансового состояния, факторов, влияющих на это изменение,
- изучение и уточнение концептуального аппарата анализа финансового состояния,
- разработка и обоснование системы обобщающих и частных показателей финансового состояния предприятий, действующих в сфере производства алкогольных напитков РА,
- анализ принятой в международной практике системы нормативов и разработка методики расчета приемлемого уровня значений основных показателей, характеризующих финансовое состояние конкретного предприятия сферы производства алкогольных напитков РА в современных условиях хозяйствования,
- совершенствование методики оценки коэффициента текущей ликвидности, показателей оборачиваемости и уровня ликвидности баланса,
- на основе сформированной системы показателей и расчетов приемлемого уровня их значений, построение интегрального показателя, характеризующего финансовое положение предприятий сферы производства алкогольных напитков РА, которая оценит финансовое положение организаций с разных сторон и даст возможность провести факторный анализ:

Научная новизна исследования. Новизна исследования - совершенствование методологии анализа финансового состояния организаций в сфере алкогольных напитков Республики Армения. В частности.

- Предложена улучшенная структурная схема анализа финансового состояния, в которой учтены уровень развития национальной экономики, особенности, проблемы,

имеющиеся в армянских компаниях с точки зрения применения традиционного алгоритма финансового анализа, и которая основана на оценках минимально достаточных и предпочтительных значений показателей, характеризующих финансовое положение организаций.

- Предложена альтернативная методология оценки платежеспособности организаций, основанная на сопоставимости периода конвертации текущих активов в денежные средства и периода погашения текущих обязательств;

- Разработаны методические подходы построения варианта матричного баланса, позволяющие оценить уровень обеспеченности активов соответствующими источниками финансирования организации с использованием четырехступенчатого подхода.

- Разработаны всеобъемлющие (интегральные) показатели финансового состояния и отдельных ее направлений организаций сферы алкогольных напитков РА, которые оценивают финансовое состояние организаций с многофакторным подходом и дают возможность провести факторный анализ.

MANUKYAN TIGRAN RAZMIK

WAYS TO IMPROVE THE ANALYSIS AND ASSESSMENT OF FINANCIAL CONDITION
(BASED ON THE MATERIALS OF THE RA BEVERAGE PRODUCTION)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality
08.00.03 – “Finance, Accounting”

The defence of the thesis will take place on October 21 , 2021, at 14⁰⁰ o'clock at 014 Council of
Economics of SCC RA at Armenian State University of Economics. Address: 128, M.
Nalbandyan str., Yerevan, 0025.

ABSTRACT

Relevance of the research topic. The multidimensional nature of the category "financial condition", the presence of a wide range of users of economic analysis and, in some cases, the inconsistency of their information goals, as well as the industry-specific features of the sphere of activity of individual economic entities, make it necessary to improve theoretical and methodological approaches to the mechanism of analyzing the financial condition of organizations, in order to adapt it to the specific conditions of individual industries and specific organizations of the economy of the Republic of Armenia

Purpose of the research and tasks. The purpose of the scientific work is a comprehensive study of the international and domestic experience of financial condition analysis, the development of improvements in the theoretical and methodological foundations for the analysis and diagnosis of the financial condition of enterprises in the field of alcoholic beverages of the Republic of Armenia and the implementation of practical proposals for their implementation.

The implementation of this goal requires the development and solution of the following main tasks:

- comprehensive study and critical assessment of existing approaches, points of view, views, principles of understanding the category "financial analysis", regarding the analysis of the financial condition in regulatory legal acts, works of domestic and foreign authors,

- comprehensive study and interpretation of the reasons for the change in the financial situation, the factors influencing this change,

- study and refinement of the conceptual apparatus of the analysis of the financial condition,

- development and justification of the system of general and specific indicators of the financial condition of enterprises operating in the field of alcoholic beverages production in the Republic of Armenia,

-analysis of the system of standards adopted in international practice and development of a methodology for calculating the acceptable level of values of the main indicators that characterize the financial position of a particular enterprise in the field of alcoholic beverages production in the Republic of Armenia in modern economic conditions,

- improvement of the methodology for assessing the current liquidity ratio, turnover indicators and the level of liquidity of the balance sheet,

- on the basis of the formed system of indicators and calculations of an acceptable level of their values, the construction of an integral indicator that characterizes the financial situation of enterprises in the field of alcoholic beverages production in the Republic of Armenia, which will assess the financial situation of organizations from different sides and will make it possible to conduct a factor analysis:

Scientific novelty of the study. The novelty of the study is the improvement of the methodology for analyzing the financial condition of organizations in the field of alcoholic beverages in the Republic of Armenia. In particular.

- An improved structural scheme of financial condition analysis is proposed, which takes into account the level of development of the national economy, features, problems existing in Armenian companies from the point of view of using the traditional financial analysis algorithm, and which is based on estimates of the minimum sufficient and preferred values of indicators characterizing the financial situation of organizations.

- An alternative methodology of assessing the solvency of organizations was proposed, based on the comparability of the period of conversion of current assets into cash and the period of repayment of current liabilities.

- Methodological approaches have been developed for constructing a variant of the matrix balance sheet, which allow assessing the level of asset security with appropriate sources of financing of the organization using a four-step approach.

- Comprehensive (integral) indicators of the financial condition and its individual areas of enterprises in the field of production of alcoholic beverages of the Republic of Armenia have been developed, which assess the financial condition of organizations with a multifactor approach and make it possible to conduct a factor analysis.

